

Գալֆայեան Մայրապետին յաջորդած է Երևանուհի Մայրապետ, որը՝ Որբուհիանոցին ո՞ր եւ է ծառայութիւն մը չմատուցանելէ զատ վնասակար իսկ եղած է։ Ասոր մահէն յետոյ՝ Օրմանեան Մաղաքիա Պատրիարքին ջանքովը կազմուած յատուկ խնամակալութիւն մը սկսաւ հսկել Հաստատութեան, գլուխ ունենալով Քրիստինէ Մայրապետ Փափաղեանը, որ իր պատուաւոր ու վառվուն գործունէութեամբը կրցաւ Որբանոցը իւր անկեալ վիճակէն բարձրացունել, մեծ հոգ տանիլ որբուհիներու դաստիարակութեան եւ մտաւորական զարգացումին եւ Գալֆայեան Հաստատութիւնը ամէնուն գորգուրանքին եւ համակրութեանը առարկայ ընել։

Բոլորանուեր իւր կոչումին եւ անձնուեր՝ իր խնամքին ու հսկողութեանը յանձնուած որբուհիներուն, Քրիստինէ Մայրապետ Ճշմարիտ մօր մը գժրտ սիրտն ունեցաւ նաեւ Որբանոցէն գուրս, դէպի թշուառ ու կարօտ Հայեր, օժանդակ ունենալով իրեն եւ գործակից՝ Աղաւնի, Մարիամ, եւ Կուէրիկ ժրացան քոյրերը։

Ազգային Եկեղեցական իշխանութիւնը Քրիստինէի եւ իր աշխատակից երեք մայրապետներուն որբախնամ ու աղքատախնամ սքանչելի ծառայութիւնները գնահատելով, զանոնք պատուեց, չորսն ալ 1918 Փետր. 14ին Սարկաւագուհի ձեռնադրելով, բան մը՝ որ առաջին անգամ տեղի կ'ունենար Պալսահայ կեանքին մէջ։

Քրիստինէ Մայրապետ յոդնած, հետզհետէ կորսնցուց իւր աշխուժութիւնը եւ զինադադարէն վերջ բաւական ատեն հիւանդակախ ապրելով, իւր արդիւնաւոր կեանքը կնքեց 1919 Յուլիս 10ին։

Քրիստինէ Մայրապետի մարմինը ամփոփեցաւ Որբանոցի մատրան պարտէզ։ Անոր Քնարանը կ'որոշուի հօն գեղեցիկ շիրիմով մը, որ կը կրէ հետեւեալ արձանագրութիւնը։

Քրիստինէ Մայրապետ  
Փափաղեան

Բարեջան Մայր Որբանոցի  
1902—1919

Ծննեալ 1848. վախճանեալ 1919

Հանգուցեալին յաջորդ կարգուեցաւ Աղաւնի Մայրապետ Քէօսէեան, որ արդէն իսկ հեղինակաւոր եւ ժիր գործունէութեամբ սկսած է Գալֆայեան Որբանոցին յառաջադիմութեանը մեծ զարկ տալ իւր ընկերուհի Մարիամ եւ Կուէրիկ մայրապետներուն հետ։

Խասգիւղի Գալֆայեանը դաստիարակած է շատ որբուհիներ, հասուցած է եւ կը հասցնէ բարեկիրթ աղջիկներ, որոնցմէ մեծ մաս մը հարսնացած, Պոլսոյ մէջ կամ այլուր, մինչեւ Ամերիկայի մէջ՝ կազմած են հայ Ազգին պատուաբեր ընտանիքներ։

1926ին Պոլսահայութիւնը տօնեց Որբանոցի հաստատութեան վաթունամեակը մեծ շուքով։

ԴԿԾ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԻԳՈՍՅԱՆ

(Ծարուհակնելի)։



## ՑԵՂԱԳՐԱԿԱՆ

### ՇՈՐՈՍԻ ԸՆԿՑԱՆ

առ — առուակ: — ւ — լեռ: — ւշ — լեռնաշղթայ:

(Ծարուհակութիւն):

### Զ.

Բահմի եւ Պալխարի Հովիտը։

Ճորոխը Կիսկիմից դէպի հիւսիս ուղղուելով աջ կողմից ընդունում է նախ՝ Պալխար Վտակը, որն սկսում է Քաջկար կամ Քաջքար (10,715') լեռներից, որը Պարիսը լեռնաշղթայի մի շարքն է, քառասուն կիլոմետր երկարութիւն ունի, քառասունի չափ առուակներ միանում են վտակին աջից ու ձախից մինչեւ Ճորոխին խառնունքը։ Պալխարի ակունքում Քաջքարի լեռներում կայ մի փոքրիկ լճակ իր ձահիճներով, որ Յալտակ (այլըն) է կոչում։ Պալխար Վտակը արեւմտահիւսիսից արեւելահարաւ է ուղղուած ակունքից մինչեւ խառնունքը։ Առաջին մեծ առուակը, որ միանում է ձախից՝ Հինդկարիսն է, որ բղխում է Հինդկարի լեռներից, իջնում է միեւնոյն ուղղութեամբ Պալխարի հետ եւ միանում է 17—18 կիլոմետր առաջ գնալուց յետոյ Պալխար աւանի մօտ, Պալխար Վտակին։ Պալխար Վտակը մինչեւ Պալխար աւանը հասնելը ոռոգում է աջկողմի առուներով Մերէխի եայլան, Պալխար Վտակի եւ Հինդկարիս առուակի միացման անկիւնի մօտ։ Հինդկարիսի ձախի ափումն է գտնուում Պալխար աւանը, ուր լեռնադաշ-

տը 4500՝ բարձրութիւն ունի: Այս աւանը մի ամփոփ քաղաքի շուկաների, գործարանների շարքեր չունի, նա ընդարձակ պարտէզներ ու այգեստաններ է, պաղառու ծառերով զարդարուած, մօտ 4—5 կիլոմետր երկարութեամբ եւ 3—4 կիլոմետր լայնութեամբ, ուր մարդիկ ամփոփուած իրենց այգեստաններում եւ պարտէզներում, շատ քիչ են իրար հանդիպում, ուր կանայք զարդարուած իրար չեն դիմաւորում փողոցներում, աղօթարաններում կամ բաղնիսներում, այլ միայն կարիք եղած ժամանակ իրար այգի են մտնում որեւէ ուտելիք կամ դործիք փոխ վերցնելու:

Այս ընդարձակ այգեստանները, բարձր ընկուղենիները, կաղամախիներն ու նոճիները այնպէս են ծածկած աւանը, որ բացի դաշտար տերեւերից ուրիշ ոչինչ չի կարող նկատել այցելուն: Դաշտար, ծառ ու այգեստան, այնպէս են գրաւում ուշքն ու միտքը, որ էլ ոչինչ չի նկատում ճամբորդը: Բայց մի կիլոմետր ցածրից վեր դնալուց յետոյ նկատելի է բերդի, միջնաբերդի տերակ պատերը, կործանուած շինքերի թումբերը, տաճարների սրբատաշ քարէ որմների մնացորդները եւ հետաքրքրութիւնը սաստկանում է: Ապա Պալխարին միանում է Ութավի առուակը, որ գալիս-անցնում է համանուն գեղի մօտից: Ալթի-Պարմագ լեռներից իջնում է Ալթի առ-կը, դարձեալ հիւսիսից-հարաւ Հինդկարիս վտակին զուգընթաց անցնում է Սուլասինեւի (Սուրդաս) եւ ապա Հուլասինեւի ծորերից, որտեղ միանում է Մարցիս լեռներից ուղիղ դէպի հարաւ իջած կորակի առուակին: Կորակը ոռոգում է համանուն աւանը եւ մինչեւ Ալթի առուակին միանալը ընդունում է աջից բնիլեսի լեռներից իջած խեւակ առուակները, որոնք Ալթի առուակին միանալով՝ իջնում են դէպի հարաւ: Կորակի ստորին ափերում, Պարխալ աւանից 2—3 կիլոմետր հեռաւորութեամբ գտնուում է Հուլասինեւի աւանը, որը Պալխար եւ Բահլ աւանների ճիշտ միջին մասն է բռնում եւ համարեա թէ այս երեքը միասին մի ընդարձակ այգեստանի Շահրիստանն են կազմում: Կորակ առուակին միանում է Բահլ առ-կը այգեստաններից շատ ցած, իսկ ինքը՝ Բահլը բղխում է Մանացրիս լեռներից, իջնում է հարաւ եւ միանում Կորակին: Բահլի առ-կ երկու կողմերը տարածուում է Բահլ աւանն ու այգեստանները, որոնք հա-

մարեա թէ միացած են, ինչպէս վերեւն ասացինք, Հուլասինեւ եւ Պալխար աւաններին: Բահլ կամ Բահլի աւանի աւերակները մի քանի վերստ տարածութիւն ունին եւ այսօր բնակչութիւնը մեծամեծ այգեստան-պարտէզներում բնակարաններ ունի ուր եւ ապրում է թէ ամառը եւ թէ ձմեռը: Բահլ առուակին միանում է Յատլիցքար առուակը, որ ոռոգում է համանուն գեղը:

Այս կործանուած ոստանի ամէն կողմը, ինչպէս Բահլի, նոյնպէս Հուլասինեւի եւ Պալխարի, կամ բաղմաթիւ աւերակ բերդեր, ամբոցներ, գլեակներ, պալատներ, տաճարներ եւ վանքեր, որոնք 40 դարի անցեալ ունին եւ կերտուածքները խօսում են իրենց դարէ-դար կենցաղի արկածներն ու զարդացումը:

Պալխար վտակը Կորակ առուակն ընդունելուց յետոյ առաջ է գնում եւ բացի մանրմունը առուակներից, ընդունում է Որթի-բաղ, Դեւրիսա, Սարգես, Ծոփիքը եւ արեւելեան Ութավի առուակները իր ճախ կողմից, որոնք ոռոգում են համանուն գեղերը եւ խառնում Պալխարին: Քիւրքիւրդ եւ Գուլի-խան լեռներից իջնում է Արջեւան առուակը, ճախից ընդունում է Սովլիցիալ առուակը, որոնք ոռոգում են համանուն գեղերն, սրանց եայլաններն ու մացրանները, ախոռներն ու հանդերը, հիւսիսից-հարաւ իջնելով, ոռոգում են նոյնպէս վակի գեղն ու բերդը, կոշնարիս, Արմաշէն, Օուդէմ, Շաղում, Խամրուտ, Մինատգեղ գեղերը, միանում են սրանց համանուն առ-ին, իջնում միանում են Պալխարին որը չորս վերստ ցած իջնելով՝ միանում է Ճորոխին:

Պալխար վտակը աջ կողմից ընդունում է, բացի Մերկիսեւի առ-ից Բալխար-Մացրա, Եայլա, Շալօվար, Վանից-Գեղ, Կիս-Պարօդ, Վժանագետ առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերն ու եայլանները:

Ինչպէս Պալխար վտակը 40 կիլոմետր տարածութիւն եւ ընդարձակ աւաղան ունի, նոյնպէս Կորակ եւ Ալթեւան առ-ը լայնարձակ աւաղաններ ունին, որոնք՝ բացի վերյիշեալ գեղերը, նոյնպէս ոռոգում են Բալիիբար, Մալխարիտ, Լանէք գեղերը եւ սրանց եայլանները: Պալխարի կամ Բահլի աւաղանը ընդհանրապէս 30 կիլոմետր երկարութիւն եւ 25 կիլոմետր լայնութիւն ունի, ինչպէս վտակը նոյնպէս լեռնաշղթան աշխարհանուչէ: Բացի ներկայիս գոյութիւն

ունեցող աւաներից, գեղերից, եայլաներից մնացել են բլուրներ եւ թումբեր որոնց մօտի գերեզմանոցները, թումբներն ու կուրդանները, բարձունքների կատարին որմերի մնացորդները ցոյց են տալիս, թէ որքան չէն եւ բազմամարդ է եղել այս գաւառը:

Այս գաւառը «Փահլեւանների», Պահլաւների կամ Բահլաւների որորանն է: Փաստերն ստիպում են ո՛չ միայն ենթաղրելու, այլ եւ համոզուելու, որ այս գաւառոն է Պահլաւների բունը՝ բնակավայրը: Բահլի կամ Բալջի աւանը համանոն առուակի ափերին, Հուղասխեւի աւանը Կոլբակի ափերին, Պալխար աւանը Հինդկարի առուի եւ Պալխարի ափերին մի տարածուած ընդարձակ աւան է — մեծ գեղ է նման Թաւրեղին, որ 15 կիլոմետր տարածուած է երկար: Եւ լայնութեամբ, կամ Բուխարային — հին նահապետական աւաններին: Եթէ լաւ ուսումնասիրուի եւ քննուի, պիտի ապացուցուի, որ Բահլի արուարձաններն են Հուղասխեւի, Ութավի, Ծատլիցկարա եւ նոյն իսկ Պալխար աւանները, որոնք մի տոհմի, մի մեծ ցեղի զանազան ընտանիքների բնակարաններն են կազմում: Այս կալուածքը գտնում է հիւսիսային  $40^{\circ}$ — $75$  —  $41^{\circ}$  լայնութեան եւ  $59^{\circ}$ ,  $25$ — $59$ — $50^{\circ}$  երկարութեան:

Կասկած չկայ որ Բահլն ու Պահլը միեւնոյն արմատական անունն է: Պալխար անուան արմատը Պահլ կամ Պալհ լինելը յայսոնի է: Որ Բահլում ապրել են նախնական փահլեւանները, երկայնաբազուկ տիտանները, բարձրահասակ հսկանները, քաջուազիկները, վկայ ու ապացուցին վկայ եւ ապացոյց են այն բոլոր շնուռածքները, որոնք աչքաղարեան շրջանից սկսեալ կերտուել են Բահլում, շրջակայքում եւ այսօր ապշեցնում են այդ մարդահասակ ժայռերով կերտուածքները բնիկներին եւ այցելուներին: Որ այդ տիտան Բահլաւանների ծննդավայրում շարունակարար ապրել են այդ հսկանները, դրան ապացոյց են աչքաղարեան ամրոցներից յետոյ, նախապատմական եւ պատմական շրջաններում կերտուած նախ կոկուած, տաշուած, ապա սրբատաշ եւ յղկուած քարերով շինուածները, որոնք նկատելի են հնումն՝ անշաղախ, ապա կրաչաղախ որմերի պատերի եւ տաճարների կազմուածքում, կործանուած բերդերի եւ աշտարակների շուրջը: Սա է անառիկ անմատչելի Պահլաւնների այն որորանը, որ եղել է, լստ Խորենացու, մա-

ռախլապատ անտառներում, արծաթապատ լակներով եւ ճահիճներով պատուած լեռների լանջերին, արագահոս առուակների խորխոր ձորերում եւ բարերեր հովիտներում:

Պահլաւնների բնավայր կալուածքը այս Բահլը պիտի լինի եւ ո՛չ ուրիշ տեղ: Գրիգոր Լուսաւորչի հայր Անակը Սասանեան Արտաշերից: այս Պահլաւ երկիրն էր պահանջում, իր քրմագետ, մողագետ պապերի, պապերուապապերի կալուածները, որին անմիջական տէր եւ ժառանգ էր համարւում Լուսաւորչի տոհմը: Փաստերը ցոյց են տալիս, որ Անակի պահանջած կալուածքը այս Բահլն է, վէճը այս փահլաւանների երկրի համար է: Խորենացու նկարագրած «Ստորոտուին Պարխարայ» ընդ մէջ Տայոց ի գիծին եւ ի մառախլապատ տեղիս մայրացն եւ լոռաւէտու»: (Բ. գիրք, 2 գլ.) ամբողջապէս ցոյց է տալիս այս Բահլը: Տոհմական կալուածն այս է, որ Վաղարշակ Պարթեւ-Պահլաւը իր պապենական կալուածքում շինել է տալիս իր Ամառնային ժամանակի հովանոցը»: Կամ թէ Խորենացու այս խօսքերը «Եթէ զրուն պատուական զձեր սեփական Պահլաւն (խընդուէք), զայն անդրէն ի ձեղ դարձուցից եւ զքեղ (Անակ) փառաւորեցից» ամբողջապէս Բահլաւնների տոհմական Տայոց-աշխարհի Պալխարի ստորոտի Պահլաւի մասին է: Եթէ հետաքրքրուինք Պարխարեան լըով, Հինդկարի լեռներով, վտակով, Բահլ առուակով եւ աւանով, կը գտնենք Պահլաւնների բնավայրը:

Այս Պահլ-Բահլ արմատը երեւում է, որ շատ հին է, ո՛չ միայն Քաղղէական-Բարելական Բահլի, այլ մինչեւ անդամ Ալիւս-Իրիս գետերի, Ամասիայի Բալիկաս թագաւորի շրջանների (Ք. Ծ. 3000 տարի առաջ) հետ կատ ունի, որով Բահլի ծագումը պէտք է փնտուել ո՛չ թէ Բաղտրիայում, այլ Բարելոնում եւ Ամասիայում: Եթէ հետեւինք Ագաթանգեղոսին, Փաւստոսին, Փարպեցուն եւ Խորենացուն, Լուսաւորիչը պարթեւական աշխարհի, Պահլաւ գաւառի տէրն է, Արշակունինների տոհմակից եւ ժառանգորդ, հետեւաբար սրա կալուածքը չէր կարող զուրս գալ ձԱ-ից: Այդ կալուածքը անպայման Անակի վիճած եւ Արտաշրի խոստացած Բահլն էր, ո՛չ թէ Բակարիայի Բահլ առաւալարինը, այլ Պալխարի ստորոտի Բահլն է իր շրջակայքով:

Արշակունիների մի տունը Հայաստանի թագաւոր դառնալուց յետոյ, նրան տեսնում ենք Պարիսի ստորոտին, վաղեմի կալուածներին կապուած, նոյն իսկ Պոնտոսի հետ սերտ յարաբերութեան մէջ։ Այս յարաբերութիւնը չէր կարող հին-տուժական եւ ազգակցական ըլինել. երեւում է, որ արիւնակցական կապեր ունէին Պալիսարի նախարար տիրողները Պոնտոսի իշխանների հետ։ Արշակունիների Հայաստանի մէջ հաստատուած շրջանում, Պոնտոսումն էլ հաստատուած ենք տեսնում Միհրդատների տիրող տունը, որի ծագումը, Հելլէն պատմադիրներն ասում են, Պարսկական է. եւ ինչի՞ չենթադրել, որ այս տունը Պարթեւ-Արշակունին է, այլ Պարսկական մի հին իշխող—Աքեմենեան — տանից։ Եթէ Պարթեւ-Արշակունիները Ատրոպատէնին, Ոսրոէնին, Էլամին-կամնասկիրեսին-Արշակունի արենակից թադաւորներ են տալիս, տներ են հաստատում, ինչի՞ պիտի չենթադրել, որ Պոնտոսի Միհրդատների տուժմն էլ Արշակունիներից էին եւ ո՛չ թէ Աքեմենեան։

Ինչպէս յայտնի է Պարթեւների տուժմը իրանի եւ Անիրանի գահը Աքեմենական իշխանութիւնը ձեռք անցնելուց յետոյ, իրանք իրենց յայտարարեցին հելլէնասէր կամ յունասէրներ, դորշմեեցին զրեթէ սկզբնական բոլոր թագաւորները իրենց դրամների վրայ Արամադդի, Ապոլլոնի, Հերակլէնի եւ Ափրոդիտէի պատկերները, ո՛չ միայն դրոշմեցին իրենց դրամների վրայ, այլ սրանց արձաններով տաճար շինեցին հակառակ Զրադաշտական օրէնքին, հէլլէն լեզուով զրեցին իրենց հրամանները եւ տքնեցան Հելլէնականութիւնը տարածել արեւելքում։ Եթէ հաւատանք արեւմտեան պատմիչների աղբիրներին, Պարթեւների պալատներում կիներն ու երեխանները, նաժիշտներն ու աղախինները հէլլէն լեզուով էին խօսում եւ դերասանները յունարէն ներկայացումներ էին տալիս։ Այս բոլորից պարզ է, որ Պարթեւական տան անդամները էրենց մայրենի բարրառից աւելի լաւ էին տիրում հէլլէն լեզուին։ Աղեքսանդր Մակեդոնացու մահից մինչեւ Արշակ Պարթեւի ինքնական թագաւորելը (330—252 թ. թ. օ. առ.) միայն ութուն տարի է անցել։ Այս ժամանակամիջուցում անհնար էր Բակտրիայում հէլլէն լեզուն այնքան հիմնաւորապէս վարժեցնել, որ պալատական կիները բոլորն էլ իւրա-

յնէին այլ բարբառը։ Հին դարը, Ասիայի կենդրոնը, Յունաստանը այնպիսի ծայրեր են, որ դժուար թէ հնարաւոր լինէր էսքիլէսի եւ Սոփոկլէսի դրամաները Բակտրիայում ներկայացնել եւ ունկնդիրներ գտնել, եթէ այդ լեզուն Պարթեւների մէջ աւելի հին եւ խոր արմատներ չունենար։ Հէլլէնասիրութիւնը այքան խոր արմատ ունէր, որ 100 տարի նախնական Արշակները, Հրահատները ածելուած երեսներով են դրոշմում իրենց դէմքերը դրամների վրայ, Հէլլէնացիների նման, հակառակ աւանդական Պարսկական սովորութեան, ուր Դնապետ-Արքան անշուշտ պիտի կրէր իր մօրուսը, իբր հայրական եւ պապենական իշխանութեան նշան։ Այս իսկ սլատմառով Պարթեւներին աջակից Իրանի միւս ցեղերը սկսան ատել նրանց եւ այս ատելութիւնը հինգ դար տեւեց։ Արշակունիներին որպէս բնականների ատում էին աղգարնակութիւնը ինդոսից մինչեւ Տիգրիս, մանաւանդ էլամացի պարսերը։

Աղեքսանդր Մակեդոնացուն գրկաբաց գիմաւորեցին արքայից-արքայի Սադրափների անզուսպ կողովուտներից ազատուելու տենչով բռնուած արեւելեան ժողովուրդները։ Բնակչութեան տրամադրութիւնը եւ օժանդակութիւնը Աքեմենեան յափշտակած կալուածները յանձնեցին աշխարհակալին, բայց երբ երիտասարդ յաղթողը ինքն անձամբ հրդեհեց իրանի ժողովրդի դարերով կուտակած մտաւոր եւ նիւթաւոր հարստութիւնը՝ Պերսեպոլիսը, արեւելքի աղգարնակութիւնը զրկեց արտօնուած յունական վաճառականական եւ կալուածատիրական իրաւունքներից, տենջացած եւ երազած հաւասարութիւնն ու անդորրութիւնը չգտաւ առաջաւոր-Ասիան, երկրադործ դասը կորցրեց Զրադաշտական օրէնքներով ունեցած իրաւունքները, այնպէս զրջացին իրենց անխոհեմ քայլի համար, այնպէս ատեցին հէլլէններին եւ հէլլէնասէրներին, որ Սելեւկեանների գահը ո՛չ միայն կորցրեց արեւելքը մինչեւ Տիգրիսի, Եփրատի ափերը, հիւմիսը եւ Փոքր Ասիան, որ շատ կարճ ժամանակի մէջ նա ամփոփուեց Ասորիքում։

Պարթեւների յաղթանակները, յաջողութիւնները չոկտաք է միայն նրանց որի ու բազկի արդիւնքն համարել, այլ Արեւելեան աղգերի տրամադրութեան եւ աջակցութեան։

Արեւելքը՝ Զրադաշտի աշխարհակայի ացքը ձգտել էր պատուել հէլլէնասիրութիւ-

նից եւ նպաստակին հասել. բայց արեւելքը այսուեղ էլ զղաց, որ նպաստել էր հէլլէնասէր Պարթեւների իշխանութեան հաստատութեան: Այս պարագան դարձեալ հաստատում է Պարթեւ արքայից-արքայի դրոշմած դրամներից, որոնց դէմքերը՝ Փրիապատից եւ Միհրդատ Ա-ից սկսեալ միշտ մօրուսով, օղերով եւ մանեակներով է զարդարուած, պարսիկ սովորոյթի համաձայն: Թէեւ թուլացրին Պարթեւները հէլլէնական արձանների պաշտամունքը, նոյն իսկ հէլլէն տառերը վերացրին, բայց չկարողացան աղդարժակութեան համակրութիւնը վաստակել: Մինչեւ վերջը իրանի երկրի ժողովուրդը նրանց ատեց, նրանց խորթ, անհարազատ հրատարակեց: Այս ատելութիւնն այնքան խորն էր արմատացած, որ մեր 1000 թուականներին, իրանի Շահնշահերի պատմութեան Նամականին գրող Ֆերդուսին, այդ շրջանի մէջ եղած բոլոր պարսիկ պատմագիրների հետ, հինգ դար վար:

Արշակունիներին ուրացան ու մոռացան եւ դրեցին զրանց մասին — ոչինչ չեն գրել պարսիկ աւանդական պոկտմաների մէջ եւ ոչինչ չգիտեն: Իրանի ժողովուրդը, նրա երկրագործ եւ հովուական աշխատաւորը մինչեւ վերջը ատեց Արշակունիներին, քանի որ սրանք պաշտպան հանդիսացան իրանի եւ նրան միացած բոլոր երկրների կալուածները յափշտակող իշխանաւորներին, ազատական սպահներին, ընդդէմ հողագործ ժողովրդի վերդի:

Ինչպէս իրանի ազնուականութիւնը, նոյնպէս Հայաստանի Նախարարութիւնը թեւ ու թիկունք հանդիսացան Արշակունի Պարթեւներին, եւ որպէս իրենց հարազատներին, այնպէս կապուեցան, որ դարից դար անվերջ Շահնշահի կամ իմպերատոր Կայսրի դռնից իրենց հարազատ Պարթեւներից միայն թագաւոր էին ուզում եւ Պահաներից՝ նրանց հարազատ բարձակից տոհմից՝ Կաթողիկոս: Քանի քրիստոնէութիւնը չէր մտել, թագաւորն ինքն էր Հայաստանի Մոլպետանց Մոլպետան ու ընդհանուր տէրը, իսկ քրիստոնէութիւնից յետոյ թագակիրները զոյդ դարձան-աշխարհական եւ կրօնական:

Այս պարագան մեզ ստիպում է աւելի կանգ առնել եւ պարզել Պարթեւ-Պահաների ծագման, զարգացման էական կետերի որոնք այնպիսի թանձը քողով են պա-

տած, որ որքան էլ շատ քննուի, այնքան նպաստաւոր եւ օգտակար է մեզ համար: Խորենացու ցուցումների համաձայն Պարթեւ առաջին գահակալ Վաղարշակի միայն գլխաւոր գործն է լինում կարգի բերել նախարական տների իրաւունքներն ու աստիճանները: Անշուշտ նախարարներին եւ թագաւորներին չէր կարող այնքան հետաքրքրել, թէ ո՞ր նախարարը, ո՞ր աստիճանին տեղ պիտի բռնէ արքայական սեղանի շուրջը, այլ ո՞րքան է այս կամ այն նախարարութեան կալուածների տարածութիւնը: Արեւելքում քաջերը սահման չունին, նրանց սահմանը սրով է որոշում, այս պատճառով երեւի միշտ ծանը եւ երկարատեւ վէճեր են եղել նախարարական կալուածների շուրջը. Վաղարշակը տքնել է բարեկարգել եւ հաշտեցնել: Սկզբնական աշխատութիւնը ամբողջ Հայաստանի գաւառների բաժանման կանոնաւորումն է, որ վէճերը Ծննդուին եւ խըժդժութիւնները, իրար դէմ յարձակումները դադարին:

Զի կարելի ասել, որ նախարարութիւնները կերպարանաւորում եւ դիրք են դրաւում Պարթեւների օրով, ո'չ. այդ նախարարութիւններն այնքան հին են, որքան հին է Նայիրի երկրի բնակչութիւնը, Հայաստանի իշխանական կամ նախարարական տները կաղմակերպուած էին, բայց սուրը ձեռքերին, միշտ իրար դէմ էին կոռում. եւ իրար Ծննդում, որ իրարից խլեն գաւառները եւ ժողովուրդը: Այս պայքարին վերջ է տրուել նախ Խալդէական-Բարելական իշխանութեան շրջանում, ապա Հաթթական եւ Ասսուրական պայքարի-աշխարհակալութիւնների պատճառով, որով դաշնաւորուել, կամ մի հօրին իշխանութեան միացել են ընդհանուր թշնամուն դիմադրելու համար: Այս պարագայի զարդացման պատճառով զարդացել է Ոստանիկ-Սեպուհների եւ երկրագործ ժողովրդի ատելութիւնը: Մեր երկրին այնքան առատարեր չէ, ինչպէս եւ Պարսկաստանը, որ Պատէղեներին տասանորդ տալուց յետոյ, պետութեան կամ արքայից-արքայի ընդհանրական զանձարանին էլ հարկ վճարէին — տասաներորդ տային: Եղիպտոսը, Սանարի դաշտը եւ ուրիշ տաքերկրի աշխատաւորը հողի հասոյթի երեք քառորդը իշխանաւորներին կարող էր տալ եւ մի քառորդով ապրել, բայց իրանի եւ Հայաստանի արդիւնաբերութիւնն այնպէս չէր կարող լինել, որ թէ՛ նախարարներին

եւ թէ պետութեան մի-մի տասաներորդ (20%) վճարէին բերքից :

Այս վէճերն առաջացրին Զբաղաշտին, այս վէճերն ստիպեցին աշխարհականերին, որ երկրագործից միայն մի տասաներորդ ստանան, որից ամը ուստ արուի նախարարին եւ մնացորդը մտցուի պետական գանձարան, իսկ պարագայից գժգոհ էին միշտ նախարարները, որոնք իրենց անսահման տէր եւ իշխանաւոր էին համարում կալուածներին. իսկ երկրամշակին՝ իրենց ճորտ : Այն ինչ արիական ժողովուրդը նախարարների եւ նրանց զօրականների Սեպտեմբերի դէմ կոռում էր, թէ տասանորդից աւելի չի տալ, հողի տէրը մշակող-աշխատաւորն է, իսկ նախարարը արքայից-արքայի պաշտօնեայ-սպասաւորը : Քանի որ արքայից-արքայի կենդրոնական իշխանութիւնը գօրաւոր էր, հողագործը պաշտպանուած՝ տասանորդ էր տալիս, երբ նախարարները ճնշում էին կենդրոնական իշխանութիւնը, դեղացուց 20—30 եւ աւելի մեծ տոկոս էին վերցնում հողի բերքից եւ սորանից շատ անդամ մաս էլ չէին տալիս արքայից-արքայի գանձարանին :

Արեւելքի ժողովուրդը Մակեդոնացուց սպասում էր արդարագատութիւն եւ սատրափների հետ նախարարների ջնջումն, այն ինչ Ալեքսանդր Հէլլէն կարգերի համաձայն իշխան-կալուածատէրէրին իրենց յափշտակած հողերի տէր եւ տնօրէն կարգեց, ստրկացրեց արիական ժողովրդին, որ չէր կարող տանել այդ լուծը, որը թէեւ նա փշրեց, բայց հաստատեց պարթեւական շղթաները :

Պարթեւները՝ ինչպէս երեւում է, որպէս Ճորոխի Ալագանի բնիկներ, վաղուց յարաբերութիւն ունէին Պոնտոսի, Սինոպի, Ամիսոսի Բոսֆորոսի, Քերսոնէսի Հէլլէն գաղութների հետ. ծանօթացել էին Պերիկլէսի շրջանի գեղարուեստի եւ գրականութեան հետ, իւրացրել էին Հէլլէնական սովորութիւնների հետ, նոյնպէս նրանց լեզուն. տքնում էին Հէլլէնասիրութիւնը տարածել նոյնպէս Արեւելքում : Հէլլէնասիրութիւնը աւելի էր հաստատուում նրանց հոգու խորքերում, քանի որ Հէլլէնական կարգերով կալուածատէրը իր կալուածքի անսահման իշխանն էր համարում եւ հողի վրայ ապրող ժողովուրդը կալուածատիրոջ ճորտը :

Պարթեւները Հէլլէնական գից արձանները, նրանց կրօնը, օրէնքները, սովորոյթ-

ները, լեզուն, գրականութիւնը տարածելու գլխաւոր նպատակն այն էր, որ արեւելքցուն ստիպեն նախարար-կալուածատիրոջ ստրկանալ, իսկ արիացին չէր կարող այդ ստրկական լուծը կրել : Ահա թէ ինչ իրանի եւ Հայաստանի իշխան նախարարները թեւ ու թիկունք հանդիսացան եւ Պարթեւների գերիշխանութիւնը հաստատեցին : Միայն այս էր պատճառը, որ Հայաստանի բոլոր նախարարները տքնում էին Արշակունի թագաւորներ եւ Պարթեւ կաթուղիկոս ունենալ, որ երկրագործին ստրկացնեն :

Ենթագրում ենք, որ Ճորոխի Աւազանում ուռացած Հայ նախարար Պարթեւներից մի ընտանիք, արեւելեան սովորութիւնների համաձայն Հիւրկանիայի եւ Բակտրիայի հովիւնների եւ հողերի վարչութիւնը Սատրափի պաշտօնը կապալով վերցրած էր Աքեմենիզներից եւ այնտեղ շահագործում էր ժողովրդին : Ճիշտ Դարեհի եւ Արտաշէս Ոքոսի օրով ինչպէս որ կապալով էին տալիս վիճակները այս ու այն Սատրափին, նոյնը կատարուում էր մեր օրերում, մինչեւ Ի-րդ դարի սկիզբները : Ահա այս Պարթեւ-Պահլաւնները հանդամանքից օդտուեցան, իրանի ժողովրդի եւ իշխանների տրամադրութիւնը շահագործելով՝ տիրեցին արքայից-արքայի գահը եւ ընկճեցին Սելեւկեաններին : Եթէ Դարեհ Վշտասպեանի ժամանակ մի Հայ Սատրափի կարողանում է ապստամբել, Բարելոնում թագ ու թագաւորութիւն հաստատել, պարսկական ինքնակալութեան ուժեղ շրջանում, ի՞նչի զարմանալ, որ Պարթեւ Սատրափները կարողացել են Սելեւկեաններին դուրս մղել երկրից եւ ձեռք բերել արքայից-արքայի գայիսոնը, ամբողջ իրանի կալուածատէր խանների աջակցութեամբ : Մանաւանդ որ ամբողջ Հայաստանի նախարարական տների համակրութիւնն ու աշակցութիւնն էին վայելում Պարթեւները. այնպէս որ նրանց հետ արիւնական, խնամիական կապերով կապուած էին : Այս էլ պէտք է նկատի ունենալ, որ իրանի եւ Հայաստանի իշխանական տները միշտ արիւնակացական կապերով կապուած էին, միեւնոյն կրօնն ունէին, իրար շատ հասկանալի լեզուով էին խօսում : Սրանց վերայ պէտք է աւելացնել, որ Աքեմեննեանները իրենց աղջիկներին սովորաբար տալիս էին քաջ իշխաններին, որեւէ յաղթանակից յետոյ եւ նրանց յանձնում էին որեւէ կուսակալութիւն : Քանի որ պատմագիրները

գրել են թէ արիւնակցական կառ է եղել Արշակունիների եւ Աքեմենիդների մէջ, ինչի չենթադրել, որ Արշակի, Տրդատի մայրը կամ մամը կարող էր լինել Աքեմենեան տոհմից :

Ինչ էլ որ լինի, ենթադրութիւնները եթէ մի կողմ թողնենք, ձորսի Աւազանի լիոնները, քարերը, գեղերը, առուակները, ոչ թէ մի, երկու, երեք տեղ, այլ քան եւ առելի տեղ վկայում են, որ իրենք Պահլաւների անուանագրածներն են, Պահլաւ-Պարթեւների օթեւանը եւ բնակայրն են եւ այդ տոհմը ծնել, զարդացել եւ տարածուել է այս աշխարհից : Ինչպէս յայտնի է կուսակալ-սատրափը որեւէ վլիճակի վարիչ գնալիս, նա մենակ չէր գնում, այլ ընտանիքով, զաւակներով, եղբայրներով եւ մեծ գունդ՝ 500—1500 սեպուհներով : Հին ժամանակները, ինչպէս եւ ներկայիս իրանում հիմնարկութիւն չկայ, վարիչ սատրափը ինքն իր հետ տանում էր իր ազգականներին, մտերիմներին եւ վստահացածներերին, որոնց յանձնում էր երկրի գաւառների վարչութիւնը, դատարանները, գանձարանները, զօրքի կազմը, թղթատարական եւ կարավանական կայարանները եւ թիկնապահական վաշտերը, այնպէս որ Պարթեւական տունը Բակտրիայում կարող էր կազմուած լինել 1000—2000 մարդուց, դա արտասովոր չէ, շատ բնական է :

Պարսիկ պատմագիրները հաստ ու կտորներ են թողել արքայից-արքայի ու իշխանական տոհմական տների եւ երկրագործարկեստաւոր ժողովրդի մէջ յարատեւ վէճերի եւ հակառակութիւնների մասին, որոնց յաճախ միջամուս են եղել Զրադաշտի մոդերը դարէ դար : Մոգերը կենդրոնացած Սավալան լեռների լանջերում, իրենց օթեւան վանքերում եւ այլերում, ապստամբներին հովանաւորել, աշակցել, պաշտպանել, խրախուսել են մաքառելու յափշտակիչ բոնակալ իշխանական վարիչների եւ սրանց հովանական վարչութիւնների մասին, որոնց յաճախ միջամուս են եղել Զրադաշտի մոդերը դէմ : Արհեստաւոր եւ երկրագործ ժողովրդի տարած յալթանակներից մի կենդանի նմուշ է զարբին Քահուէի գոգնոց դրաշակի պատմութիւնը կամ Մազդաքի Նուշիրվանի դէմ վարած մեծ պատերազմը, որոնք մեզ աւանդում են, թէ աշխատաւորները Զրադաշտի մոգերի հետ միջտ ստիպել են Շահնշահերին խոնարհուիլ եւ գործա-

դրել Զրադաշտական հողային օրէնքը, մի տասներորդից առելի տուրք չգնել մշակողի ուսին : Զրադաշտական աւեստաները կորած են, ջնջուած, բայց աւանդապահ ժողովրդի սովորոյթներն յարատեւ են եւ ասում են, թէ իշխանները երկրամշակի վարած եւ արդիւնաբերած հողի տէրը չեն, այլնրանք շահերի ընկճուած ստրուկները, որոնց իրենց գործակալներն են դրել թագաւորները դաւառներում, իսկ հողը մշակողինն է եւ նա պետական հարկը — մի տասներորդը միայն պիտի վճարէ . իսկ պաշտօնեանների պիտի ապրուստ տայ նրանց հրամանակալը-Շահնուշահը տասանորդներից : Երանեան աշխարհում բոլոր յեղափոխութիւնները այս հողից հասոյթ վերցնելու համար են առաջացել, ամէն խոռվութիւն, ապստամբութիւն վերջացել են այս տասանորդական հարկի վերահաստատումով : Ահա այս է եղել ինչպէս իրանի ժողովրդի ապստամբութիւնների էական պատճառը, այս է եղել Հայաստանի երկրագործի մաքառումների պատճառը իր նախարարների դէմ . եւ Սավալանի մոգերետին դիմելու՝ քրիստոնէութեան դէմ մաքառելու միակ պատճառը : Իսկ պարթեւական տունը պարսիկ եւ հայ նախարարների այրուժիով, սեպուհներով եւ սպաներով այնքա՞ն ուժեղ էին, այնքա՞ն դաժան կապերով էին շղթայել ժողովուրդը, որ պարթեւական տան պայքարը երկրագործ հասարակութեան դէմ շուրջ հինգ դար տեսեց եւ մոգետները, պարսիկ սասանեան իշխանների, երկրամշակների եւ հովիների օժանդակութեամբ կործանեցին պարթեւական տունը, հիմնեցին Սասանեան պարսիկ հարազատ թագաւորական տոհմի հարստութիւնը համայն իրանի վրայ : Այս պարագան շատ քիչ լուսարանուած է պարսիկ պատմիչների կողմից, այն ինչ քրիստոնեայ հայ վարդապետ պատմիչները այս պայքարը խեղզելու համար, բոլոր չարութիւնների պատճառը համարել են Զրադաշտական-մոխրապաշտական կրօնի բոնութիւնները քրիստոնէութեան դէմ եւ տքնել են ամրացնել Պարթեւ-Պահլաւեան իշխանութիւնը մեր երկրում, իրենց նախարարական կեղեքից տներով :

Չէ կարելի երեւակայել, որ Հայաստանի արեւելեան ծայրում, Սավալանում հիմնաւորուած մոգերը չէին հետաքրքրուում հայ հողագործի ստրկական վիճակով, չէին տքնում իրենց ատրուշաները անվերջ բոցա-

վառել մեր լեռների անտառների անուշահոտ փայտերով։ Բայց զարմանալի է թէ ի՞նչ սրանց մասին յիշատակութիւն չկայ։ Երեւի մեր պատմագիր վարդապետներն եւս սոսկում էին Պարթեւ իշխանական եւ արքայական տներից, մանաւանդ Պահլաւ եպիսկոպոսապետներից, որոց միակ ջանքն էր կալուածների հասոյթից մեծ տոկոսը քաշել իրենց վայելչութեան համար։ Անկասկած, 440 ական թուականներին ատրուշանաւոր մողերը Հայաստան մտան հայ գեղական ժողովրդի կոչերով, երկրագործի բողոքին բաւարարելու ձգտումով, այն ինչ այդ բոլորը վերագրում են Յազկերութիւն, թէ նա հայերին բոլորովին պարսկացնելու համար, ձգտում էր նրանց մոխրապաշտ դարձնել։ Արեւատեան-Բիւլանդական Հայաստանի ժողովուրդը, կեղեգուած երկրագործը 535 թուին դիմում է Տիգրոն, խնդրում է իրան ազատել կայսերական սոսկալի հարկերից եւ կեղեգուածներից եւ օգնութիւն է պահանջում։ իսկ հայ հողագործի բողոքների մասին ո՛չ մի բառով անդամ չեն յիշատակում, լուսմ են։ Անշուշտ Մամիկոնեան, Բագրատունի եւ Արծրունի իշխանների ապապրած եւ զրել տուած պատմութիւնները-պիտի ներբողէին միայն նախարարական տոհմերը եւ քրիստոնէութիւնը, որի բեմերից վարդապետները քարոզում էին — «ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց»։

Նկատելի է, որ Պարթեւները Բակտրիայից Հայաստանի թագաւոր գառնալուց յետոյ, հէլլէնական դից արձաններ են բերում եւ մտցնում բնիկ դից տաճարները եւ հրամայում են երկրագել։ Մեզ յայտնի չէ, թէ արդեօք երկրագործ եւ արհեստաւոր ժողովուրդը համամի՞տ էր Պարթեւ գահակալներին եւ նրանց քրմերին, երկրագո՞ւմ, զոհարերո՞ւմ էր թէ ո՛չ։ Այս մասին լուսմ են պատմիչները, բայց չատ հաւանական է, որ արեւամոխրապաշտ ժողովուրդը, հետեւելով Պարսկաստանի երկրագործին, արհամարէր հէլլէնական աշճանները, քանի որ հէլլէն օրէնքներն ու կարգերը բոլորը սահմանուած են միայն իշխանաւոր նախարարներին զօրեղացնելու, սրանց հասոյթին ընդարձակելու եւ հողագործին լիովին սուըրկացնելու։ Կասկած չկայ, որ հէլլէնական կուռքերը ատելի էին Հայաստանում, այնպէս, ինչպէս որ արհամարուած էին իրանում, քանի որ այդ դից քուրմերը են-

թարկուում էին Պարթեւներին եւ նախարարներին, օգտուում էին տաճարներին յատուկ կալուածներից եւ զոհարերութիւններից, ովհաք էր, որ պաշտպանէին տիրողների շահերը։

Պարթեւներին եւ Պահլաւներին չէր կարող աշխատաւոր ժողովուրդը յարդել եւ սիրել։ քանի որ նրանք միշտ ձգտում էին հէլլէնական կարգերի միջոցով ստրկացնել երկրագործներին եւ սրանց ծառայեցնել իրենց, այն ինչ ժողովրդի հայեացքը միշտ արեւելքի, միշտ Սավալանի կողմն է եղել եւ անվերջ պահանջնել են արիական Զրադաշտական նիստուկաց, քրիստոնէութիւնը ընդգունելուց էլ յետոյ։ Զէին կարող պնդել, թէ ժողովուրդը-աշխատաւորութիւնը չէր բողոքում, չէր ապաստամբում, չէր մաքառում, քանի որ մեզ յայտնի է, որ նախարարներից մեծագոյն մասը ընկճուած, պարտաւորուած էին պարսկական հրահանգներուն ենթարկուելու, որպէս զի չըրկուին իրենց հասոյթիներից։ Զնայելով որ Տայեցիները հոռոմական նահանգին շատ մօտ էին ապրում, բիւլանդական կայսրները ձգտում էին նրանց կուլ տալ, բայց նոյն իսկ Բագրատունիների օրով եւ սրանից էլ յետոյ Տայեցիները միշտ պահպանեցին իրանի կարգն ու սարքը եւ դարեր յետոյ ընկճուածնախարարների սերունդն ընդունեց իսլամն ու նրա աշարի (10 %), տասանորդական օրէնքը, որպէս զի դիրքն ու հասոյթը ըստ կորցնէ։

Ճորոխի իշխանները չէին համոզուում, որ երկրի գերիշխանութիւնը արքայից-արքային յանձնելուց յետոյ, իրենց նախկին կալուածատիրութիւնից զրկուել էին եւ զեղացին միմիխայն տասանորդը սրանց փոխարէն տալու էր համապետական դանձարարներն, որի մօտ գործաւոր եւ պաշտօնակատար էին դարձել այդ երեմնի իշխանները։ Հնումն երբ մի իշխան նուածում էր գրացու կայուածները, ընկճուածին ամբողջ տոհմով կոտորում էր, տիրում էր հողին եւ երկրագործին։ Աշխարհակալութեան ժամանակ միենոյն տեսարանն էր կազմում, միայն թէ աշխարհակալը ընկճուածին երեմն սպանում էր, երեմն էլ ներում, թողնում էր նուածնուած երկրին կառավարիչ։ Այս անգամ իշխանն այլեւս կալուածատէր չէր Զրադաշտական կարգերով, այլ յաղթողի ծառաւական կարգերով, որպէս պահապահ եւ երկրագործից որեւէ

մաս, տուրք, բաժ. ստանալու արտօնուած չէր: Այս մտքի հետ չէին հաշտուում կալուածառէրերը, այլ ձգտում էին հէլլէն-հոռմէտական կարգերով՝ ընկճուելուց, յաղթողի գերիշխանութիւնը ճանաչելուց յետոյ էլ, նորից անսահման տէր եւ իշխանաւոր մնալ իրենց նախկին իշխանութեան: Բայց արիական աշխարհի օրէնքները չէին հաշտուում այդ մտքի հետ: Կալուածքը չէր կարող երկու տէր ունենալ, նրա տէրը միմիայն երկրամշակն էր եւ պետութեան պահպանութեան համար կալուածքից չէր կարելի երկու հարկ առնել, այլ մի պետական հարկ: Իսկ երկրագործը դուրս էր գալիս իշխանի ճորտութիւնից, հարկատուութիւնից, դառնում էր համապետական հարկատու ժողովուրդ:

Լեմինական:  
(Տարուակակերի:)

ԽՏՐՊԵՑ



## ՍԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ROTH, DR. KARL, Armeniaca. Zeitschrift für Erforschung der Sprache und Kultur Armeniens. Fasc. I. Leipzig 1926. Verlag der Asia Major.

Ահա եւրոպական հանդէս մը, որ զուտ հայագիտական հարցերու ուսումնասիրութեան նույիրուած է: Տնօրէն-հրատարակիչը՝ Դոկտ. Կարոլոս Ռոթ թէեւ հայ գիտական լայն շրջանակներու մէջ տակաւին անծանօթսակայն տասնեակ տարիներէ ի վեր արդէն հայկական մշակոյթի ուսումնասիրութեան նույիրած է ինքոյնքը: Արմենիական հրատարակութեան գաղափարը՝ համաշխարհային պատերազմէն յառաջ արդէն յղացած էր ան, ինչպէս կը պարզէ իր յառաջարանին մէջ:

Արմենիական ապագայ ծրագիրն ու ուղղութիւնը սապէս կը գծէ Դոկտ. Ռոթ. «Armeniacaի հրատարակութիւններու շրջանակին կը վերաբերի այն ամէն բան, ինչ որ մասնաւորապէս զուտ հայ լեզուագիտութեան, պատմութեան, եկեղեցական պատմութեան, աղջախօսութեան ու գեղարուեաւարի պատմութեան կը հայի: Անոր էջերը բաց են այնքան կարեւոր բարբառախօսու-

թեան, արձանագրութիւններու եւ փոքր բնագիրներու հրատարակութեան առաջ»: (Յառաջարան, էջ III:)

Armeniaca իր այս ներկայ թուի IV + 132 էջերուն մէջ կու տայ արդէն շահեկան յօդուածներ. Կարև Ռոթ կը պարզէ «Հայկական ուսումնասիրութիւններն ու անոնց այսօրուան պաշտօնը» (էջ 1—14), Յովսէփ Ստրչիկովսկի կը գծէ «Հայաստան եւ Եւրոպայի նախառումանական փայտաշէն ճարտարապետութիւնը» (էջ 15—38), իսկ Յովհաննէս Շվիգեր կը զբաղի «Արուեստի եւ բնութեան իրականութիւններ» ու հետ (39—114): Այս յօդուածներէն զատ հանդէսը կը բովանդակէ դեռ երեք մատենախօսականներ Դոկտ. Ռոթի կողմէ, մինչ՝ Մարկուարդի «Հայ ազգին ծագումն ու վերականգնումը», միւսը՝ Գ. Տէր Մկրտչեանի եւ Մեսրոպ Եպիսկոպոսի «Պատմութիւն Շապհոյ Բաղրատունւոյ» եւ Երրորդը՝ Ստրչիկովսկիի «Քրիստոնէական եկեղեցական ճարտարապետութեան ծագումը» գործերու մասին: Եւ ի վերջոյ հայկական մատենագիտական համառօտ տեղեկութիւն մը:

Դոկտ. Ռոթի յօդուածը, որ բանախօսութիւն մըն է խօսուած 1923ի Բերլինի գերմանացի արեւելագէտներու մէկ ժողովքին մէջ՝ ուրուազծելէ յետոյ թէ ի՞նչ շըմաններէ անցած է հայ լեզուի ուսումնասիրութիւնը մինչեւ ներկայ ժամանակ՝ կը չետէ թէ հայերէն լեզուի ուսումնասիրութեան մէջ շարդ կարեւոր կէտ մը անուշագիր թողուած էր, որ մեծապէս պիտի նպաստէր ինդրոյն առաւելագոյն պայծառութեան, այսինքն թէ հայ ժողովուրդը խառնուրդ ժողովուրդ մըն է եւ հետեւարար հայերէն լեզուի քննութեան մէջ ալ անհրաժեշտ է որ նկատի առնունք թէ խառն լեզուի մը հետ է մեր գործը (էջ 1—4): Այս իրողութեան իրը չօշափելի փաստ մատնանիւ կ'ընէ հայերէն լեզուի մէջ գրաբարի եւ աշխարհաբարի տարբերութիւններէն զատ մասնաւորապէս հայ ժաղովրդական լեզուի բազմաթիւ գաւառաբարբառներու բաժնուած ըլլալու պարագան, ինչպէս նաեւ այն իրողութիւնը որ շատ մը հայերէն բայեր ու բառեր խոնարհումի ու հոլովումի տարբեր տարբեր ձեւեր կը ներկայացնեն, ինչպէս օրինակ՝ այտնում եւ այտչիմ, յամեմ եւ յամեամ, տեսանեմ եւ տես-